

# ԵԿՄ հուշամեդալներ հանձնվեցին առաջնագիծ մեկնած կամավորներին

26.09.2016

Հայաստանի Հանրապետության Անկախության 25-րդ տարեդարձի կապակցությամբ Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը Գեղարքունիքի մարզպետարանում ընդունեց 2016 թվականի ապրիլ-մայիս ամիսների ընթացքում հայրենիքի սահմանների պաշտպանությանը Գավառի տարածքից մասնակցած 29 կամավորներին: Գեղարքունիքի մարզպետը ԵԿՄ վարչության անունից Երկրապահի հուշամեդալներով եւ ՀՀ Պաշտպանության նախարար Մեյրան Օհանյանի շնորհակալական խոսքի տպագիր տեքստով պարգևատրեց Գավառի տարածքից ապրիլ-մայիս ամիսներին առաջնագիծ մեկնած 45 կամավորներից 29-ին, ովքեր Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության դիրքերում եւ Արցախյան ազատամարտում աչքի են ընկել նաև 1991-94 թվականներին: „Դուք ժամանակին արել եք այն, ինչը միայն երախտագիտության է արժանի: Ձեր ու ձեր մարտական ընկերների շնորհիվ մենք կարողացանք ապահովել մեր հաղթանակները եւ պահպանել մեր երկրի անկախությունն ու սահմանները: Ապրիլյան հերոսամարտերում էլ ձեզանից շատերի զավակները, ոգեւորվելով ձեր գործած սխրանքներով, հերոսական ու հաղթական կռիվներ մղեցին մեր անդորրը խախտած նենգ թշնամու դեմ: Դուք եղել եք առաջնագծում եւ տեսել, թե ինչ հերոսական ոգի ունեն մեր երիտասարդ զինվորները: Այս պարգևատրումը դեռևս ձեր գնահատման իրական չափանիշը չի, քանի որ ձեր անձնագրությամբ, այն էլ ոչ թե մեկ անգամ, դուք ապացուցել եք, որ հայրենիքին ծառայելը սուրբ պարտականություն է: Մենք փորձում ենք մեր հնարավորությունների սահմաններում աջակցություն ցուցաբերել ինչպես զոհված ու վիրավոր ազատամարտիկների, Ապրիլյան հերոսամարտերում զոհված կամ հաշմանդամ դարձած զինծառայողների, այնպես էլ կամավոր հայրենիքի սահմանների պաշտպանությանը մասնակցածների ընտանիքներին: Մենք միշտ պատրաստակամ ենք լսելու եւ ընդառաջելու ձեզ ամենատարբեր խնդիրներում, -ասաց մարզպետը: Ծնորհակալություն հայտնելով ստացած պարգևի համար՝ ազատամարտիկ, 2016 թվականի ապրիլ-մայիսին առաջնագիծ մեկնած Հովհաննես Միրբյանը միաժամանակ առավել թանկ պարգև համարեց այսօրվա խաղաղությունը, մեր երկրի սահմանների անվտանգության ապահովումը եւ հայ կյանքի հարատևության իրավունքի նվաճումը: Ոգեւորված ենք նման գնահատականի համար: Մեր շարքերում մարտիկներ կան, որ մինչ այժմ նման պարգևների չէին արժանացել: Սակայն մեզ համար ամենամեծ պարգևն այն է, որ մենք մարտնչել ենք հանուն մեր սուրբ հայրենիքի ազատության, որ այդ մաքառումով կարողացել ենք ապահովել հայ ժողովրդի, հայ կյանքի շարունակականությունը՝ նշեց Հովհաննես Միրբյանը: Հանդիպման ավարտին ԵԿՄ Գավառի բաժանմունքի նախագահ Աշոտ Գասպարյանը Ասպետաց ակադեմիայի հուշամեդալով պարգևատրեց Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանին: